

**Յովհաննէս Չիլիսկիրեանի շուրջ կէս դարեայ նուիրումը՝  
նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակի կեանքն ու  
քնարերգութիւնը  
ճանաչելի դարձնելու համար հայոց եւ այլոց**

**Թորոս Թորանեան**

Կէս դարի հետեւողական աշխատանք ըսելը դիւրին է:

Յովհաննէս Չիլիսկիրեանը ըլլալով եղբօր զաւակը Ռուբէն Սեւակ նահատակ բանաստեղծին՝ դիմեց բազում միջոցներու, որպէսզի բարձր հնչէ անունը ՌՌԻԲԵՆ ՍԵՒԱԿ բանաստեղծին, ոչ անոր համար, որ նահատակուածը արեան սերտ կապ մը ունէր անոր անուան հետ՝ այլ հերոսական էր անոր կեցուածքը, երբ Չանդրիի մէջ Ռ. Սեւակ որպէս բժիշկ կը բուժէր թիւրք աղջիկ մը, որ սիրահարուած էր իրեն, եւ անոր հայրը դիմելով հայ բժիշկին՝ կ'առաջարկէր որ Ռուբէն թրքանար, ամուսնանալով իր աղջկան հետ:

՝ Թող ընեն կտոր-կտոր: Ես հայ եմ, ամուսնացած, եւ երկու զաւակի հայր՝:

Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ:

Յովհաննէս Չիլիսկիրեանի կէս դարեայ ճիգերը յանուն իր եղբօր որդւոյն անուան տարածումին՝ անոր լոկ նահատ ըլլալուն համար չէ՛ր, այլ նաեւ անոր համար, որ Ռուբէն Սեւակ բարձրարժէք բանաստեղծ ու արձակագիր էր՝ արժանի պատուանդանի:

Եւ ի՞նչ ըրաւ Յովհաննէս Չիլիսկիրեան: Ան տասնամեակներով օգնեց երեւանցի մէջ հինուած Ռուբէն Սեւակի անունը կրող դպրոցին, որուն բակին մէջ տիրականօրէն կանգնած է նահատակ բանաստեղծի կիսանդրին, հայեացք ուղղած Արեւմտեան գրաւեալ Յայաստան:

Այդչէրբաւեր:

Չիլիսկիրեանը իր կնոջ՝ Իրմայի համաձայնութեամբ հարաւային Ֆրանսայի Նիս քաղաքին մէջ հիմնեց թանգարան մը, որ իր գոյութեան քառասուն տարիներուն ընթացքին ունեցաւ բազմաազար այցելուներ, եկած աշխարհի բոլոր կողմերէն: ՝ ՌՌԻԲԵՆ ՍԵՒԱԿ թանգարան՝, ուր ակնդիրները կը դիտէին բազմատասնեակ արուեստի գործեր, մէջն ըլլալով Յովհ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻԻ մէկ լայնածիր ծովանկարին կողքին տասնեակ եւելի գեղանկարներ կային ոչ միայն ծովանկարչական գործերու՝ այլեւ բնանկարներու, դիմանկարներու եւ խորհրդապատկերներու:

Յովհաննէս ՉԻԼԻՍԿԻՐԵԱՆ նախապէս ուզած էր այդ թանգարանը հիմնած տեսնել Յայաստանի մէջ: Իր դիմումները ժամանակի իշխանութիւններուն կողմէ մնացած էին անպատասխան: Ահա, այդ

պատճառով Չիլի ինկիթեան Նիսի մէջ հիմնած էր «ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿ»-ի անունը կրող թանգարանը:

Մեր օրերուն, Հայաստանի իր անկախութեան տիրանալէ յետոյ՝ Յովհաննէս Չիլի ինկիթեան հայը հասած ըլլալով ինիսուն տարիքի սեմին, մտածած է.

«Իմ մեկնումէս ետք ո՞վ պիտի հովանաւորէ այդ սուրբ անունը կող թանգարանը»:

Ուստի դիմած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.ՏԵՐ ՏԵՐ Գարեգին Բ. Կաթողիկոսին, որ նոյն անուն թանգարանը փոխադրուի Ս. Էջմիածին:

Դրական պատասխանը եղած է ըրպէս.

Այս կողմէն իրագործումը նոյնպէս եղած է փութանակի:

Վեհափառ Ռուբէն Սեւակի թանգարանին համար տրամադրած է Ս. Էջմիածնի վանքի շրջաբակին մէջ գտնուող ամրակուռ շէնքերէն միոյն գանգուածեղ մասը, անոր ընդարձակ սրահով ու քովնտի սենեակներով, կառուցուած 18-րդ դարուն: Չայն գեղազարդելու ճիգերուն մէջ մեծ բաժին կ'ունենայ Չիլի ինկիթեանի աներծագը՝ գորգագործ Յակոբ Աւագեանը, որ կ'ապրի նեւի մէջ:

Երեք այցելութիւն այս թանգարանին՝ ուրախութեան, բերկրանքի առիթ մը եղաւ ինծի համար, ինչպէս ինծի ընկերակից գրող քարեկամներուս, Մանուկեանին ու Գրիգորեանին համար:

Յովհաննէս Չիլի ինկիթեանին համար այս քանը քիչ էր:

Տասնամեակներու ընթացքին ան գրած է բազմատասնեակ յօդուածներու տասնեակ մը գիրք՝ լուսաբանող կեանքն ու գործը Ռուբէն Սեւակի: Թուականի կարգով կէս դարը ամբողջացնող իր գործերուն մէջ՝ կը գտնենք ներհուն հրապարակագիրի փաստագրական միտքեր, լոյս տեսած ժիրայր Նայիրիի խմբագրած «Արարատ» օրաթերթին ու «Նայիրի» շաբաթաթերթին մէջ:

Իսկ գիրքերէն յիշենք.

Ա.- «ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿ ԵՒ Փրցուելիք ուղեղներ, 1885-1915», Փարիզ:

Բ.- «ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ Անուան Յիշատակի, գաղափարականի մրցանակներ», Փարիզ, 1989 թ.:

Գ.- «Թուրքերի չգիտցած» իրականութիւնները», Երեւան, 2003 թ., թիւրքերէն, ռուսերէթն եւ անգլերէն լեզուներով, նաեւ հայերէն, 383 էջ:

Վերջին էջին վրայ արձանագրուած են ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿ-ի անուան մշակութային հիմնական հրատարակութիւնները՝ թիւով քսան հատոր, հեղինակներու եւ հատորներու անուանակոչումներով:

Կը տեսնէ՞ք, թէ ո՞ւր հասած են ձեռնարկները:

Դ.- «Թուրքերուն [իբր թէ] Չգիտցած իրականութիւնները», Երրորդ եւ լրացումներով հրատարակութիւն, Երեւան, 2013, 522 էջ, մայրենի լեզուով:

Ռուբեն ՍԵԻԱԿ-ի Յիշատակի տան հրատարակած գիրքերու ցանկը հասած է երեսուն չորսի:

Ե.- "Վերադարձ Չայաստան", Երեւան, 2011, 157 էջ:

Զ.- "Սուտերու եւ Երազներու Չոհ, 'էջ նահատակ' Եղած Ազգ մը՝ Չայերը", Ա. հատոր, Լիբանան, 2004, 780 մեծադիր էջ:

Է.- "Սուտեր եւ Սխալներ Ազատուած Ռուբեն ՍԵԻԱԿ-ի հերոսական կեանքի եւ գաղափարականի Պատմութիւնը", Երեւան, 2012 թ., 785 մեծդիր էջ:

Ը.- "Թուրքերուն [իբր թէ] չգիտցած իրականութիւնները", հրատարակուած թիւրքերէնով, Երեւան, 2013 թ., 380 էջ:

Թ.- "Թուրքերու կողմէ ժխտուած իրողութիւններ", Ֆրանսերէն լեզուով, Երեւան, 2005 թ., 201 էջ:

Ժ.- "Ռուբեն Սեւակին նուիրուած միջոցառում՝ Խաչատուր Աբովեանի անուան հայկական պետական մանկարվարժական համալսարանում", 12 Սեպտեմբեր, 2013-ին, ուր խօսք առած են համալսարանի տնօրէն Ռուբեն Միրզախանեանը, պրն. Յովհաննէս Չիլիսկիրեանը, Երուանդ Ազատեանը, գրականագետ եւ Սեւակագետ Ալեքսանդր Թոփչեանը, մանկավարժական համալսարանի դասախօս եւ գրականագետ փրոֆ. Ա. Դոլուխանեանը, "Սփիւռք" գիտաուսումնական կեդրոնի տնօրէն քանասիրական գիտութիւններու դոկտոր Սուրեն Դանիէլեանը՝ որոնք բոլորն ալ ինքնուրոյն ու մտացի մօտեցումներով վեր հանած են նահատակ քանաստեղծի փոխանցելի յատկանիշները:

ԺԱ.- 1915 Չանդըրըն վերյիշումներ՝ քնազիր հրատարակութիւններէ կազմուած, Նիս, 2013, մեծածաւալ 45 էջ:

ԺԲ.- Նեսիմ Օվատիա Իգրաիլ, 24 Նիսան 1915, Իսթանպուլ, Չանքըրը, Այաշ, Անգարա:

Այս գիրքին մէջ Ռուբեն ՍԵԻԱԿ-ի վերաբերեալ գրութիւններու մասին կարգ մը ճշդումներ կատարած է Յովհաննէս Չիլիսկիրեան: Նիս, 2013, 58 մեծադիր էջ:

Յոս հեղինակ հրատարակիչը այս հրատարակութիւններուն մէջ կատարած է ճշդումներ, աւելցնելով.

- "Ինչի համար այս գիրքը Ֆրանսերէն արտայայտուիմ՝ monumentale, կոթողային գործ մըն է: Սրտանց նորհակալութիւններս կը յայտնեմ:

Ես՝ հայ գրողներու եւ պատմագետներու կողմէ '24 Ապրիլ 1915'-ի մասին այսքան խոր պրպտումներով գիրք մը հրատարակուած ըլլալուն տեղեակ չեմ":

Այսքանը ըսելէ ետք, Չիլիսկիրեանը կ'անցնի իր ճշդումներուն, հաստատելով թէ Ռուբեն Չիլիսկիրեան Սեւակի ծնողները եղած են հարուստ, եւ միջանի հողատարածքներու տէր: Սակայն իրենց որդին ինչո՞ւ նիւթական դժուարութեանց մատնուած է Լոզանի մէջ՝ համալսարանական ուսմանց ընթացքին:

Քանի որ բժշկական ուսանող Ռուբենը սիրահարուած ըլլալու օտար աղջիկի մը՝ որոշած է ամուսնանալ անոր հետ, ու իր խորապէս հայ հայրը՝ դադրած է իր զաւակին դրամ ուղարկելէ:

Չիլիսկիոյ Յովհաննէս այլ տեղելու Եւս ուղղումներ կատարած է, ու շարունակած է բարձր գնահատել Նեսիմ Օվատիայի տուեալ հատորը, այսպէս.

Տուեալ օտարագիր գիրքին 482 էջին մէջ գրուած է, թէ 'Յէլենը համալսարանը մականվարժութիւն կ'ուսանէր', HELENE MARIA APELL (ծնեալ 1890) RFURT-ցի իր ընտանիքին կողմէ Լոզան ուղարկուած էր, այդտեղի այսօրուան իմաստով FINISHING SCHOOL ըսուած երիտասարդ աղջկանց վարժարանը: Լոզանի աղջկանց այս վարժարանը ոչ մէկ ատեն համալսարան չէր:

Կրկին 483 էջին մէջ 'Ռուբեն Եւ Յէլեն 1910-ին Լոզանի մէջ' ARRONDISSEMENT D'ETAT CIVIL DE LOZAN Եւ ոչ թէ Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցիին մէջ: Նման ճշդումներ կատարած է Յովհաննէս Չիլիսկիոյ: Նման պարզաբանումներ ճշգրտելով՝ ան մեթնոլորտին ճշգրիտ պատկերը կուտայ:

Ռուբեն Սեւակ՝ 'թրքանալը յուսահատիլ կը նշանակէ'՝ ըսած է: Իր կեանքի դաժան օրերուն անգամ՝ աքսորի մէջ ան վկայած է Բիւզանդիլեզուն:

'26 Օգոստոս 1915-ին Գալիսիոյ մօտ Թեւեւայ ըսուած վայրը բժիշկ Ռուբեն Սեւակ, Դանիէլ Վարուժան Եւ Երեք ընկերներուն սպաննուած վայրը ոչ մէկ հայ ակնատես վկայ կար...

Այս ողբերգութիւնը պատմող միայն կառապան Յասան անունով վկայ մըն էր... հոս Եւս զարտուղի լուրեր կը շրջին, երբ այդ ողբերգութեան մասին ուրիշ գրող մը՝ բժիշկ Ս. Ղարեւանդ, 1924-ին Նիւ Եորք հրատարակուած իր գիրքին մէջ ուրիշ վկայութիւն մը կը բերէ.

-Քանի մերկացնելու փորձի մը դեմ Սեւակ կ'ըմբոստանայ, իսկ Վարուժան ստոիկեան իմաստունի մը պէս համակերպող ոտգիով մը կը հնազանդի...':

Յեղիսակը՝ բժիշկ Ս. Ղարեւանդ:

Յովհաննէս Չիլիսկիոյ կը մանրամասնէ դէպքերը արդարօրէն տասնեակ վերստուգուած մէջբերումներով:

Վերապրող աքսորականներէն հաւաստի տեղեկութիւններ կուտան Ռուբեն Սեւակի մասին՝ Միքայէլ Ծամտանճեան, Յեւան Չ. Վարդապետ Կարապետեան, բժիշկ Վահան Ալթունեան, Արամ Անտոնեան, Օհաննէս Թերլեմեզեան, Բիւզանդ Զէչեան: Իսկ Պալագեան վրդ.՝ Սուտու սխալ բաներ գրած է Ռուբեն Սեւակի մասին՝, ի զարմանս Յովհաննէս Չիլիսկիոյ, նաեւ ի զարանս մեր...

Յովհաննէս Չիլիսկիոյ հեղինակած գիրքերուն 3400-է աւելի էջերուն վրայ պիտի աւելնային բազմահարիւր էջեր՝ եթէ այս օրերուն ինիսունը անց իր տարիքը Եւ առողջական վիճակը ներեր:

Դուք կը յիշէք այս հեղինակին մէջ ծաւալուն գիրքը, որ կը կոչուի՝ Սուտերու եւ երազներու զոհ,՝ Էշ նահատակ՝ եղած ազգ մը՝ հայերը՝:

#### Ա. հատոր

Յովհաննէս Չիլիսկիրեան յոգնիլ չգիտցող հայը, որ կը կրէր նաեւ Վրէժ Ռուբինեան անունը, յանուն նահատակուածին՝ վրէժ լուծելու պատրաստած էր նաեւ նոյն ծաւալով (780 էջ) Բ. հատոր մը, գրածներուն ծաւալը հասցնելով շուրջ հինգ հազար էջի...

Անոր տրամադրութիւնը՝ Ներկայ Եմ՝ կ'ըսէ, մտածելու, արտայայտուելու եղանակը՝ մանաւանդ արդար դատողութիւնը ներկայ, բայց... ֆիզիկական առողջութիւնը՝ նեղացուցիչ է:

Երանի՝ արագընթաց դառնար Չիլիսկիրեանի բարելաւումը, ու մենք իր գրիչէն ստանային նոր երկեր:

Բայց արդէն ունինք անկորնչելին՝ մեզի ընծայուած հունձքը:

Եկէք պահ մըն ալ այդ տրուածին դիմենք, նայինք, հայրենասիրութեան հրդեհներ կա՞ն հոն, նայինք Չիլիսկիրեանի այգին ծաղկազարդ է, ու հարո՞ւստ՝ մեղուներու բզզիւնով, յանուն վաստակելիք մեղրի:

Բաննք Ա. հատոր կոչուող այգիին երկաթեայ փեղկերը, ու...ի՛նչ կը տեսնենք.

՝՝Մտեանս կը Ձօնեմ Տխրայուշ 90-ամեակին բոլոր ժամանակներու մեծագոյն եւ անպատիժ մնացած հայկ. ցեղասպանութեան, մեծ եղեռնի Անմեղ Չոհերուն, եւ հայ դատի պայքարի դիւցազն նահատակներու սրբալոյս յիշատակին...

Նաեւ...

Ներկայ ու գալիք պահանջատէր եւ արիասիրտ նոր սերունդներուն, որ անվատ ու հաւատալից կամքով շարունակեն իրենց նախնիներուն, արդարատենչ մարտնչումը՝ մինչեւ ձեռքերումը Արդար Յատուցման՝:

Որպիսի՞ ձօն՝ ճենճերող հոգիէ մը արձակուած, երբ մեր ժողովուրդը կը կրկներգէ՝ ՝՝Եռացող կաթսան կափարիչ չի՛ բռներ...՝՝:

Իսկ երկասիրութեան յառաջաբանը կ'ըսէ շեշտակիօրէն.

՝՝Մի՛ կարդաք այս գիրքը՝ եթէ...

Յարգելի ընթերցող, պիտի խնդրենք, որ Չկարդաք այս գիրքը...

Եթէ ձեր հոգւոյն մէջ չունիք ցաւը Արեւմտեան Յայաստանին՝ մեր մեծ հայրենիքին կորուստին ցաւը:

Որովհետեւ մեր գրածները ձեր սրտին ու մտքին պիտի չխօսին:

ՄԻ ԿԱՐԴԱՔ ԱՅՍ ԳԻՐԲԸ...

Եթէ Դաշնակցութիւն կուսակցութեան կը պատկանիք...

Եթէ աղանդաւոր ղեկավարներու լոզունգներուն եւ անոնց սուտ պատմութիւններուն կը հաւատաք:

ՄԻ՛ ԿԱՐԴԱՔ ԱՅՍ ԳԻՐԲԸ...

Եթէ Սիոնիզմ ըսուած հրեշիս ճիւղաւորներէն եղող  
Ֆարմասոնութեան կը պատկանիք:

Որովհետեւ սակը նշանակէ, որ դուք ձեր հոգին ծախած էք ձեր  
ժողովուրդը ցեղասպանութեան ենթարկածներուն, ձեր պատմական  
հայրենիքի գողութեան մեղսակիցներուն: Կողմ էք ու  
հանդուրժող՝ մարդկային եւ ազգային անիրաւութիւններուն:  
Ձեր հոգիին մէջ հայկական նշոյլ մը անգամ չէ մնացած:

ՄԻ՛ ԿԱՐԴԱՔ ԱՅՍ ԳԻՐՔԸ...

Եթէ եսասեր եւ ինքնահաւան մըն էք:

Որովհետեւ դուք հայելիին մէջ ձեր տեսած՝ դեմք՝ ին  
սիրահարած մըն էք եւ դուք՝ միայն ձեր անձը կը սիրէք ու կը  
հաւնիք:

ՄԻ՛ ԿԱՐԴԱՔ ԱՅՍ ԳԻՐՔԸ...

Եթէ փայլուն խօսքեր, երազային սնամէջ ու խաբուսիկ  
պատմութիւններ կը սիրէք:

Որովհետեւ մեր գրութիւնները կարծր, տափակ ու ցաւոտ  
իրականութիւններ են:

Այս գիրքը՝ հայ մեծ Ազգը կործանումի մատնող կեղծ  
ազգասեր հայ առաջնորդներուն դեմ անէծքագիր մըն է:

Այս գիրքը՝ հայ անարժան առաջնորդներուն կատարած  
դաւաճանութիւններուն դեմ ընդվզումի աղաղակ մըն է՝՝:

Յովհաննէս Զիլիսկիրեան

Վրէժ Ռուբինեան

Յ.գ. Կարծեմ հազարաւորներու մէջ ըսուած բոլոր լեզի ու  
կծու խօսքերը չսուեցան հոս: Պէտք է կարդալ պոռթկալի այս  
հատորը՝ ուր հայկական տասնաբանեայ պատուիրաններ կան, ծնած  
մեր գողցուած հողէն եւ Զիլիսկիրեանի սիրտէն:

**Թորոս Թորանեան**